

ՊԱՅՄԱՆՔ

Տարեկան գին և Պարայ հմբ. 8 Մճ.
Պարայ հմբ. 10 Մճ.
Վեցամսեյ և Պարայ հմբ. 4 Մճ.
Պարայ հմբ. 5 Մճ.
Ծանուցման տողը մէկ անգամի հա-
մար 3 դուրուշ երկու անգամի հա-
մար 2 դուրուշ աւելի անգամներու
համար զատ սակարկութիւն կըր-
այ :



ԼԵԱՔԻՐ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ

ՊԱՅՄԱՆՔ

Դուրս գացած լրագրաց ճանրու-
ած արք. խմբագրութեան վրայ է :
Լրագրոյ վերաբերեալ նամակ
կամ որ և ինչ գրութիւն խմբագրի
— Տնօրէնին պիտի ուղղուի : Ղալա-
թիա Սանտրոքճըար շատակսի թիւ
198 : Կորս խան, Մասիսի գրասեն-
եակը :
Ճանրու ծախքը չվճարուած նա-
մակ չընդունուիր :

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ 6 ԴԵԿՏԵՄԲԵՐ

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Բլէշլայի անկման վրայ տակաւին
մանրամասն տեղեկութիւններ չկան,
բայց ի կորչաւոր իշխանին դեկտ. 11
թուով մէկ հեռագրէն, որ կը հաս-
տատէ թէ Կազի Օսման փաշան նոյն
առաւօտուն յարձակում մ'ըրեր է
Ռուսաց վիտ գետին ձախ կողմն ու-
նեցած զորաց վրայ, որպէս զի անցը
մը բանայ : «Յարձակումը մեծ քաջու-
թեամբ եղաւ, կըսէ կորչաւոր իշխա-
նը : Թուրքերը մեր ամրութեանց և
թնդանօթի պատնէշներուն մէջ մը-
տան : Հինգ ժամ պատերազմէ ետեւ,
Բլէշլայի քաջարի պաշտպանը՝ սրուն-
քէն վերադարձաւ՝ իւր բոլոր զօրաց
հետ գերի ինկաւ : Գերեաց և առա-
րաց թիւը տակաւին ճշդութեամբ չէր,
բայց ամեն բան Ռուսաց ձեռք ան-
ցաւ : Ռուսաց կորուստը ձեռք բեր-
ւած արդիւնքին հետ բաղդատմամբ
մեծ չէր, թէ և տակաւին հաշիւ չէր
եղած : Ասկէց կը տեսնուի թէ յիսուն
ժամ պատերազմի և երկու կողմէն 40-
50000 մարդոց կորուստի զորոյնքը մեծ
մասամբ չափազանցութիւն էին : Ռու-
սաց Սթանբուլի, Սիպէրիոյ և Սա-
մոսիոյ զուգեւեռն ամենէն աւելի
կորուստ տուած են : Եթէ այս դուռ-
դերը բոլորովին չ'ընկած ալ ըլլան,
դեռ կորուստը տան հազարէն շատ
վար կը մնայ : Սակայն պէտք է ողա-
մել որ Եւրոպական լրագիրքը աւելի
մանրամասն նկարագիր տան ներկայ
պատերազմին այս մեծ դուռադէին :

Արեւելեան թատերախաղին մէկ նոր
արարուածն ալ սկսաւ : Սերվիոյ կա-
ռավարութիւնը Բ. Դրան հետ իւր
յարաբերութիւնը խղեց : Անցեալ ուր-
բայթ օր մայրաքաղաքիս Սերվիական
գործակատար Պ. Բրիտիչ արտաքին
գործոց նախարարին յայտարարութիւն
մը տուաւ, որով կը ծանուցանէր թէ
Սերվիա պատերազմի պիտի մասնակ-
ցի : Նոյն օրը Պ. Բրիտիչ թրիտատի
շողեւնաւով մեկնեցաւ, և Բերայի Սեր-
վիական գործակատարութեան տանը
վրայէն զինանշանները վերցան : Այս-
պէս Սերվիա հաստատեց այն կաս-
կածները թէ Բլէշլայի անկման կըս-
պասէր գիմակը բառնալու համար :
Փոխանակ երախտագարտ ինկելու
անցեալ գարուն Բ. Դրան չնորհած
հաշտութեան, որ պարզապէս իւր
առաջուն վիճակը կը վերադարձնէր,
մինչդեռ իւր դաւաճանութիւնը պատ-
ժոյ արժանի էր, Սերվիա բաւական
ժամանակ երկրամի ընթացք մը բըռ-
նելէ և իւր պարտքն իսկ չվճարելէ
ետեւ, Օսմանեան մեծ բանակի մ'ան-
կումէն օգուտ քաղելով՝ ուղղակի ա-
պրտամարտութեան կը դիմէ դարձեալ,

արհամարհելով պաշտպան և երաշ-
խաւոր տէրութեանց յորդորներն ու
խրատներն, որք դժբաղդաբար ամ-
րութեան դատապարտեալ էին, քա-
նի որ գործնական հետեւանք մը չպիտի
ունենային : Միւսին իշխանն, որ ար-
դէն զինուորական պատրաստութիւն
ները կը փութացնէր, դէպ ի սահ-
մանագրութեամբ քաջելու պատրաստեալ
զօրադուռի մ'առնալուստելով ըսաւ
թէ Սերվիոյ ձեռնարկած առաջիկայ
պատերազմն, որուն աշխատութեանց
իշխանն ինք ալ խօսք տուաւ մասնակ-
ցելու, լաւագոյն վախճան մը պիտի
ունենայ. քանզի այս անգամ ոչ միայն
աւելի լաւ պիտեալ է, այլ և զօրա-
ւոր դաշնակցի մ'օգնութեան կը յի-
շու : Ռուսիոյ բանակակիցներէն բարձ-
րաստիճան չորս սպայք Պէլլրատ հա-
սած էին Սերվիոյ արտաքին գործոց
նախարարին հետ խորհրդակցելու հա-
մար : Սակայն Ռուսիոյ հետ Սերվիոյ
դաշնակցութիւնը տակաւին վերջնա-
պէս որոշուած չէր : Կըսուի թէ Սեր-
վիոյ տէրութեան ներկայացուցած ծա-
նուցադրին մէջ յայտարարուած է թէ
այսուհետեւ Եւրոպա ոչ ևս Սերվիոյ
ինքնօրինութեանն երաշխաւոր է : Բայց
այսպիսի յայտարարութիւն մ'աւելի
աղաւթ կը թողու զՍերվիա քան թէ
դայն գործելէ կ'արդեալ :

Եւրոպական լրագրերէն ոմանք
կըսէին թէ Կրեաթ ալ ապստամբու-
թիւն մը ծագել է, բայց այս լուրը
չհաստատուեցաւ : Միայն թէ Կրեաթի
մէջ միշտ անպակաս եղող դժգոհնե-
րն հիւպատոսներուն յայտադիր մը
զրիւր են, որոյ մէջ կողմն իսլամ
բնակչաց ալ կ'առաջարկեն որ իրենց
հետ միանալով կառավարութեան դէմ
ապստամբին : Կրեաթացւոց գիտաւո-
րութիւնը Բլէշլայի անկումէն ետեւ
ոտք ելնել է եղեր : Հելլենական կա-
ռավարութիւնը Կրեաթացւոց ազդա-
րութիւնը բրած է, որ եթէ իւր
խորհրդոց հակառակ կանխահաս շար-
ժում մ'ընեն, Յունաստանէն Կիւրիտ
կամաւորներ ու օգնութիւններ եր-
թալը պիտի արգելու : Առ այժմ կըս-
ուի թէ Բ. Դրանը Կրեաթէի յաղթանց
առաջն աւելու համար բարձրաստի-
ճան յոյն պաշտօնատար մը մասնաւոր
պաշտօնով կողին պիտի զրկէ : Շարաթ
օրը կըսուէր նաեւ թէ յիշեալ պաշա-
նատարը ճանապարհ ելած է :

Բլէշլայի անկումէն վերջը կը յու-
սացուէր որ միջնորդութիւն մը կը-
լայ հաշտութիւնը վերահաստատելու
համար : Բայց վիեննայէն Անգլիա-
կան լրագրաց կը հեռագրեն թէ եր-
կու պատերազմադադար առաջարկու-
թիւններն ու պահանջումներն այն
չափ իրարմէ տարբեր և հեռի են,
որ Անգլիա՝ իրեն միջնորդներէն մին՝
դեռ միջնորդութեան ժամը հասած

չհամարիր, մինչև որ երկու պատե-
րազմադադար մին բոլորովին ընկնի : Ա-
ւարտիս ալ այս կարծեաց վրայ կե-
րելի, և Գերմանիա դեսպանախոր-
հուրդի կարեւորութիւն չտարով այն-
պէս կը յուսայնէ թէ նախամեծար
կը համարի որ բանակցութիւնը պար-
զապէս երկու պատերազմադադար մէջ
լինին : Իսկ Ռուսիոյ կարծեաց դա-
լով, դեռ պաշտօնապէս բան մը յայ-
տարարած չէ, բայց իւր կէս պաշ-
տօնական թերթերուն խօսքին նա-
յելով՝ հաշտութեան խիստ պայման-
ներ պիտի պահանջէ : Կօլոս լրագիրը
կըսէ թէ Ռուսիա որչափ և Պալքանի
թերակողմն բնակեալ Սլաւաց յառաջ-
դիմութեանը կը փախաբի, սակայն
ուրիշ միջոցն Ռուսաց յառաջդի-
մութիւնն աւելի սիրելի է իրեն :
Բայց Ռուսիոյ ազգային յառաջդիմու-
թիւնն անկարելի պիտի ըլլայ եթէ
անկայուն խաղաղութիւն մը հաս-
տատուելով, տէրութեան բոլոր ոյժը
նոր պաւերազմի մը պատրաստու-
թեանց վառնուի : Այն ատեն քաղա-
քական բարենորոգմանց և արդէն
սկսեալ բարեօրոգմանց կատարեալ
գործման վրայ չպիտի կրնայ խորհ-
ուիլ : Հետեւաբար Կօլոս հաստատուն
հաշտութեան մը կը փախաբի, որուն
հասնելու համար ամենամեծ զոհու-
թիւններ պատերազմին շարունա-
կութիւնը նախամեծար կը համարի :
Կօլոսի առաջարկած պայմանաց մին
է Ռուսիոյ միշտ յեղեղած վարկու-
ցական խօսքը, այն է « Թուրքիոյ
քրիստոնէից վիճակին բարեօրոգումը »,
որոյ համար կառաջարկէ ներկայ իշ-
խանութիւններն անկախ ընել, և հե-
տը հետէն նոր իշխանութիւններ կազ-
մելով ամեն քրիստոնէաց ազգաց ա-
զատութիւն տալ :

Կօլոս լրագիրն այսպէս Ռուսիոյ
համար հպատակներ և դաշնակից-
ներ պատրաստել կուզէ, առանց հոգ-
ընելու թէ Օսմանեան ազգ մը և տե-
րութիւն մ'ալ կայ, որ ոչ միայն ի-
րաւունք՝ այլ և տակաւին շատ մեծ
զօրութիւն ունի, զորս պէտք է նը-
կատողութեան առնուլ : Մինչև որ
Պոսնիոյ, Հերսէլի և Պուլղարի մէջ
իսլամ կալուածատեարց և գիւղաց-
ւոց յարաբերութիւնները կարգի չը
գրուին, Ռուսաց բանակը չպիտի կը-
նայ եղեր Դանուբն անցնել : Այս ալ
գրեթէ կողոպտում մ'է, քանզի կալ-
ւածատեարց իրաւունքն ինչպէս կա-
րելի է բառնալ՝ առանց սեփակա-
նութեան իրաւունքն իսկ ժխտելու
և տեսակ մ'ընկերակիւնութիւն հաս-
տատուել : Օսմանեան աշխարհակա-
լութեան ժամանակ Եւրոպական թուր-
քիոյ հարուստ կալուածատեարք իս-
լամութիւն ընդունած էին իրենց հո-
գերը պահելու համար : Բայց առանց
չորս հինգ դար քաղաքակրթութիւ-
նը ետ տանելու ինչպէս կարելի է

հոգաւորաց իրաւունքը ժխտել Ռու-
սիոյ մէջ ալ մեծ կալուածատեարց
հոգերը դիւղացւոց տրուեցան, բայց
տէրութիւնն հոգաւորաց հատուցում
տուաւ : Ասկէ վերջը կուգայ վնասի-
րի և Կարգաւելի նեղուցներուն Ռու-
սիոյ պատերազմական նաւուց՝ բաց
ըլլալու պայմանը, Կարսի, Պալմու-
կայի Ռուսիոյ թողումը : Վերջապէս
Կօլոս կը պահանջէ որ հաշտութեան
դաշնակցութիւնը միայն Ռուսիոյ և
և Թուրքիոյ մէջ կնքուի առանց Եւ-
րոպիոյ միջամտութեան : Եթէ Ռու-
սիոյ տէրութեան կարծիքն ալ այս-
պէս է, ինչպէս հաւանական կը թը-
ւի, հաշտութիւնը խիստ դժուարին
կըլլայ, թէ և իկնաթիւք զօրավարին
Ռուսաց բանակակիցներն երթալու
համար կայսեր կողմանէ հրաւեր ընդու-
նելը բանակցութեանց սկզբնաւորու-
թեան նշան կը համարուէր : Բ. Դրան
և Եւրոպա հարկաւ աւելի դժգոյն
նին եթէ Ռուսիոյ ուրիշ գիւնադէտ-
ներէն մին բանակցութեանց միջնորդ-
կարգուի : Թերեւս Ռուսիոյ այս պա-
հանջմանց պատճառաւ է որ Անգլիա
առ այժմ ձեռնապահութիւն կընէ :

Գարատաղի իշխանը Չէթինէի
հրամանատարին հեռագիր մը կը դար-
նէ ծանուցանող թէ Ալպանիոյ մէջ
ձեռնարկեալ արշաւանքն հետեւեալ
արդիւնքը յառաջ բերել է . 9 բերդ-
առնուեր են, 22 թնդանօթ Գարա-
տաղցւոց ձեռքն ինկել են, ուր Գա-
րատաղի սահմանադիւնէն մինչև Պո-
յանա և Շքոտրայի լիճէն մինչև ծովը
տարածուող երկրին տէր եղած են :
Միմայն Շքոտրայի բերդին առջև է
որ Գարատաղի բուռն դիմադրու-
թիւն կը գտնեն :

Վերջին թղթաբերով եկած Եւ-
րոպական լրագրաց մէջ հետեւեալ
լուրերը կը կարդանք .

Թուրքիոյ Մակեդոնի 1 դեկտ.
Օրկանիէ բոլորովին պաշարեալ է
Ռուսաց բանակէն :

Գառապիք զինուորներ կը պատմեն
թէ Օսման փաշան նոյեմբեր 27ին հե-
տեւալ խօսքն ըսեր է իւր զօրաց .

« Տղաքս, տանն հինգ օր պիտի
սպաննը . եթէ մինչև այն ժամանակ
օգնութիւն չընդունինք, դուրս յար-
ձակելու փորձ մը կընենք » :

Օրոտով 7 դեկտ .

Քամարլիի դէրը շատ գիւրաւ
պաշտպանուող բլուրներու շարք մը
կը կազմէ, որք մի և նոյն ժամանակ
Օրկանիէի, Եթրօրի և Սլաւինայի
կիրճերուն երբ գոցելու առաւելու-
թիւն մ'ունին :

Ռուսաց վերջին յարձակումները
չէին կրնար յաջողիլ, որովհետեւ ինչ-
եալ գիւրը ճակատի կազմէն անա-
ռիկ էր, և Ռուսք զոյն պաշարելու
համար ըստ բաւականի զօրութիւն
չունէին :

Ամսոյ 4 ին Ռուսք շատ կորուստ ունեցան :

Ռուս գումարտակ մը՝ Սերվիոյ սահմանադրին մօտ գտնուող Պէրլի-րատնքը անուն փոքրիկ ամուր գետին տիրէր է : որ վիտիկի և Լոմ-թալանքայի ճանապարհաց վրայ կը նայի , նիշի և Սօֆիայի մէջ :

Եաշ 2 դեկտ. Երէկ ինկաթիւնի զօրավարն հոս հասաւ , և բանակակերպութիւնը պիտի երթայ : Գանի օրէն ի վեր բաղում զօրք կ'անցնին Եաշէն :

Կոստանդնուպօլիս 2 դեկտ. Ժամանակէ մի վեր Գերմանիոյ միջնորդութեամբ բանակցութիւնք եղան Ռուսիոյ և Թուրքիոյ մէջ գերիներու փոխանակութեան համար , բայց չյաջողեցան : Ռուսաց հրամա-տարութիւնը կուգէր Ասիոյ մէջ գերի բռնուած 16 փաշաներուն մին՝ ծովային տեղակալ Պ. Բուսիլի հետ փոխանակել , բայց Բ. Դուռը չհաճեցաւ :

Բեդրսոյուրի 8 դեկտ. Կայսրը՝ Ս. Վլադիմիր Ա. կարգի պատուանշանն ու սուրը տուաւ Լո-րիս Մելիքօֆ զօրավարին՝ Կարսը առնելուն համար , և Ս. Գեորգի Բ. պատուանշանը տուաւ Հէյման զօ-րավարին՝ Տէվէ-Պոնուի յաղթութեան համար :

Դեկտ. 10 թուով Թիֆլիզէն քաշ-ւած հեռագիր մը կը ծանուցանէ թէ Ռուսք Էրզրումէն Տրապիզոն տանող ճանքան գրաւեր են :

Կըսուի թէ երէկ Բ. Դուռը հե-ռագիր հասեր է թէ Տ. Դուկասով զօրավարը վան մտեր է :

ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Վիէննա 15 դեկտ.

Կը հաւատեն թէ Ռուսիա Եւրոպա-կան տէրութեանց միտքը կը դնէ խա-ղաղական առաջարկութեանց մասին ու-նեցած արտահայտութիւններուն նկատ-մամբ : Կըսեն թէ Ռուսիոյ պահանջում-ները չարաւոր են : Վաղը Բէլճիայի մէջ մեծ միջինի մը պիտի ըլլայ՝ Ռուսիոյ որ և է կերպիւ ընդարձակմանը դէմ բողոքե-լու համար , որ Աւստրո-Հունգարական կառավարութեան համար փոխադարձոր պէտք է նկատուի :

Լոնտրա 15 դեկտ. Օրագիրը միջամտութիւն մը կը պա-հանջեն :

Կարնոյ Անդրիական հիւպատոսը ետ կանչուած է :

Հասարակաց կարծիքն ընդհանրապէս խիստ դրուեալ է Սերվիոյ դէմ իւր ուս-տադրութեան համար :

Պուրէշէն եկած հեռագիրը կը ծա-նուցանեն թէ հաւանականաբար Օսման փաշայի ոտքը պիտի կտրուի :

Լոնտրա 15 դեկտ. Թագուհին Լորտ Պիքսփիլիսին պ-ցելութիւն մը տուաւ :

Լոնտրա 15 դեկտ.

Մօրնիկ-Բօսթ լրագիրը առայժմ մի-ջամտութեան մը վրայ կը տարակուսի : Սակայն յիշեալ լրագիրը , կ'աւելցնէ թէ Ռուսիոյ խիստ և բիրտ քաղաքականու-թիւնը կարելի է որ զիմադրական միջոց-ներ ձեռք առնուի տայ Անդրիոյ :

Պրիւսիա 15 դեկտ.

Ռուսական Նոր լրագիրը կըսէ թէ Բ. Դրան առաջարկած պայմաններուն վրայ հաշտութիւն կ'ընել անկարելի է : Կ'ա-ւելցնէ թէ Եւրոպայի անհամաձայնութեան վրայ Բ. Դրան ունեցած պատրանքը քիչ ատենէն պիտի ցրի :

Վիէննա 16 դեկտ.

Եւրոպական տէրութիւնք տակաւին բացորոշ արտահայտութիւններ չյայտնե-ցին միջամտութեան մը համար :

Ռուսիոյ 16 դեկտ.

Կը հաւատեն թէ Անթիպիլիսի պա-

հապան զօրքը Գարատաղացոց առաջար-կութիւնները մերժելով յայտներ են Ե-դեր թէ Աւստրիացոց անձնատուր պի-տի ըլլան :

Հոմ 16 դեկտ.

Նախարարութիւնը իւր հրաժարակա-նը տուաւ զոր թաղաւորն ընդունեց : Պ. Տէրբէթիսի յանձնուեցաւ նոր նախարա-րութեան մը կազմութիւնը :

Պուրէշ 16 դեկտ.

Ալէքսանդր Կայսեր առաջին բժիշկը Օսման փաշան կը խնամէ :

Փարիզ 15 դեկտ.

Ժողովը այսօր քուէի դրաւ՝ կառավա-րութեան խնդրանքը վրայ երկու տաս-ներկու երրորդ և չորս ուղղակի տուրքե-լը :

Պոնաբարթեանք և օրինակներ յայ-տարարեցին թէ պիտի քուէարկեն , բայց իրենց քուէն փոխադարձութիւն չպիտի շահէր :

Բէլճիա 16 դեկտ.

Երեսփոխանաց Ժողովին մէջ Պ. Հէլ-ֆի հարցուց թէ Հունգարական նախա-րարութիւնը միջոցներ ձեռք պիտի առնու-արդիւնէր համար Սերվիոյ որ Բ. Դրան հետ կ'ընքած դաշնադրութիւնը նորէն չը լսէ :

Փարիզ 16 դեկտ.

Պ. Էմիլ Տը Ժիրարտէն Փարիզի իններ-րորդ չըջանակէն երեսփոխան ընտրուե-ցաւ փոխանակ Պ. Ժիւլ Կրէվի որ Ժիւ-րա նահանգը ընտրեց :

Բէլճիա 16 դեկտ.

Թուրքաց ի նպաստ միջինիւ , որ այ-սօր կատարուեցաւ ի ներկայութեան 8000 չափ անձանց , որոնք առաւ թէ Հուն-գարական կառավարութիւնը պէտք է զէմ կենայ ամեն կարելի եղած միջոցներով , Ռուսիոյ զօրութեան ապագայ ընդարձակ-ման :

Լոնտրա 15 դեկտ.

Օսմ. Գոն.	9 1/8
Փոխ.	1865 9 3/8
»	1869 9 7/8
»	1871 34 1/4
»	1872 46 3/4
»	1873 8 3/4
» Եղիպտ.	53 3/8
Անգլ. Գոն.	95 1/4

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Կայսերական հրամանաւ՝

Պայազիտի նախորդ կառավարիչ Ալի Գէմալ փաշան Ափրիկեան Տըրի-պօլոյ կուսակալ անուանեցաւ վէզի-րութեան աստիճանաւ :

Գուրպան պայրամի արարողու-թիւնը՝ նախընթաց օրը սովորական հանգիսիւ կատարուեցաւ :

Վեհ. Սուլթանը արքունեաց զին-ւորական և քաղաքային պաշտօնա-տարաց հետ Այա-Սօֆիայի մզկիթը գնաց , ուր Գումարուած էին նախա-րարք , իւլէմայք , Կ. Պօլոյ մէջ գըւ-նուող բարձրագոյն և ընդհանուր սպայք և քաղաքային բարձրատի-ճան պաշտօնատարք , ամենքն ալ համազգեստ հագած :

Ամեն տեսակ զօրքեր և գլխա-ւորապէս քաղաքային պահապան զօրաց վաշտեր վեհ. Սուլթանին անցած Ժամանակ երկու կողմէն շար-ուած էին : Աղօթքէն վերջը վեհ. Սուլթանը կառքով Տօլմա Պահէճի պալատը գնաց , ուր պաշտօնական ընդունելութիւն եղաւ :

Կաղի Օսման փաշան՝ Պուլկարիոյ Պօլօթ քաղաքէն դեկտ. 13 թուով հետեւեալ հեռագիրն ուղղած է իւր աներձագ. Միւսթաֆ Էֆէնտի զատէ Բիլա պէյին , որ Մեծ-Եպարքոսին քարտուղարն է :

Պիտէք անշուշտ թէ ամիսուկէսէ ի վեր պաշարուած էինք : Այն ա-տենէն ի վեր բնաւ օգնութիւն չըս-տանալով և պաշարնիւ ալ բոլորովին սպաւելով , սրտեցի զօրացս հետ

ճանքայ մը բանալ Ռուսական բանա-կին մէջէն , բայց բոլոր էգանցս հա-կառակ չյաջողելով՝ զօրացս հետ գե-րի ինկայ : Զօրացս քաղաքօրծու-թիւնը մեծապէս գնահատուելով շատ մարդասէր ընդունելութիւն գտայ Վեհ. Կայսրէն և իւր եղբայր Նիքօլայ Մեծ դուքսէն : Զախ սրուն-քէն վերադարձեցաւ , բայց բաւական աղէկ եմ : Ուր զրկուելիքս տակա-ւին չեմ գիտեր : Մանրամասն նա-մակ մը պիտի գրեմ ձեզ՝ երբ ինձ յատկանայիք բնակատեղիս համեմա-լ :

ՕՍՄԱՆ

Յար Տիւ Պօսթօր լրագիրը կըսէ թէ Բէլճիայի անկումէն անմիջապէս ետքն Էւրոպական հրապարակաց վը-րայ Օսմ. արժէթովոց գիները բարձ-րացեր են , հաշտութեան հաւանա-կանութիւնն աւելցած ըլլալով , իսկ հետեւեալ օրը թէ՛ Օսմանեան և թէ՛ Անգլիական արժէթովոց նորէն կոտ-րելուն պատճառն է եղեր՝ Բ. Դրան կողմանէ Գերմանական դեսպանին միջոցաւ խաղաղական բանակցու-թեանց մտնելու առաջարկութեան բացարձակապէս մերժուիլը կ'օրոշու-քով իշխանին կողմանէ , որ պատաս-խաներ է թէ խաղաղական բանակ-ցութեանց Ժամանակը չէ հիմա :

Երէկ առաւօտ Տամաշ Մահմաւ փաշան քանի մը բարձրատիճան սպայից հետ յատուկ շոգեկառքով ճանքայ ելաւ Զաթալայի , Լաիր-նէի , Ֆիլիպէի և Պալքաններուն ամ-րութիւններն աչքէ անցունելու հա-մար : Նորին Բարձրութիւնը տասն օ-րէն պիտի վերադառնայ :

Մէհմաւ Ալի փաշան Սօֆիայէն Կ. Պօլիս հասաւ , կը հաւատեն թէ Շա-քիր փաշան չէ ընդունելու անոր տեղ հրամանատար ընտրուելի , և տեղը Բե-ճէպ փաշան կարգուեր է :

Երէկ Բ. Դուռը եկած հեռագիր մը կը ծանուցանէ թէ Օսման փաշային ոտքը կտրել հարկ ըլլալով , վերաբու-ժական գործողութեան չէ կրցեր դի-մանալ և դժբաղդաբար մեռեր է :

Օսմանեան երեսփոխանական Ժո-ղովն երէկ Բ. Նիսան ընելով , քանի մը գործեր կարգադրելէն յետոյ , այսօրուան նստին ալ իւր դիւանը պի-տի ընտրէ :

Պրուսայէն և Սերբիանուպօլէն եկած լուրեր կը ծանուցանեն թէ Ե-պարքոսական բարձր հրամանն և քաղաքային պահապան զօրաց վե-րաբերեալ՝ կանոնադրութիւնն անց-եալ հինգշաբթի բոլոր հասարակու-թեանց երեւելիներուն առջև կար-դացուեր և անմիջապէս գործադ-րութեան յանձնուեր են :

Ագրիանուպօլիս , Ֆիլիպէ և Սե-լանիկ բնակեալ 52 անձինք նախըն-թաց օրը նաւ դուռեցան Մէրսին զրկուելու համար , ուսկից ալ Առանա պիտի տարուին , որ իրենց աքսորա-տեղի նշանակուած է :

Պատիւէթ լրագիրը կըսէ թէ Ա-լէքսանդր Կայսրը՝ պատերազմին չը մանակցելու պայմանաւ Կ. Պօլիս եր-թաւու հրաման տուեր է Օսման փա-շային , բայց Օսման փաշան այս չնոր-հը մերժել է գերի մնալը նախա-պատու սեպեր է :

Թուրք լրագիրը կը ծանուցանեն թէ Կայսերական կառավարութիւնը չըջարեալաններ զրկել է քաղաքա-

յին և զինուորական իշխանութեանց օրպէս զի ընտանեաց միակ նեցուկ եղող անձինքը բանակին մէջ զինուոր չգրեն , ինչպէս նաև անոնք՝ որք զին-ւորական ծառայութենէ ազատ են ըստ նոր կանոնադրութեան :

Կարսի Ֆրանսիոյ հրամանատար Ֆէրիք Ահմետ Մուսլիս փաշան , որ վէզինքէ օյի պատերազմին մէջ ստա-ցած վէրքերը գործունեւ համար էր , Պօլիս եկած էր , Լաիրսայի զօրա-բաժնին հրամանատար անուանե-ցաւ :

Շարաթ երեկոյ էլէնայի պատերազ-մին մէջ գերի առնուած Ռուս դնդա-պետ մը , հազարապետ մը , 3 սպայք և 171 ստորին սպայք Ֆիւ զինուորք Սիրքէճի կայարանը հասան 10 թըն-դանօթաց հետ , որք նոյնպէս գերի առնուած են :

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

ԷՍԶԱՄԸ ՈՒՄՈՒՄԻԷ

5 դեկտ. երկուշաբթի իրիւր 9, 33

6 դեկտ. երեքշաբթի առաւօտ

բացուեցաւ

ժամ 6 ին

Բուլղարի երկաթուղի

Ֆր. 26

Թղթադրամ

Լիր. 228

ԸՆԹԱՅՔ ԱՐԺԵԹՂՈՅ

Կ. Պօլիս 5 Գեկտեմբեր

Ստիւթէ Ժէնէրալի բաժ. Անգլ. Լիր. 3, 5

» Գերմանական թեան » 2, 17

Կ. Պօլիս Պանքային » 3, 18

Գրէտի Ժէնէրալ » 3, 15

Գրէտի Օսթրո-Թիւրք » —

Փոխ. 1863 Ֆր. 43

» 1865 » 45

» 1869 » 43

» 1872 » 45

» 1873 » 44

Թրամուայ Օսմ. Լիր. 0 85

ԸՆԹԱՅՔ ԳՐԱՄՈՅ

5 Գեկտեմբեր

Անգլ. Լիր » 222 33

Նաբօնն ոսկի » 86 25

Խոնէրալ Ռուս » 58 20

Գըրըմի » 51 10

Հինգ ֆրանք » —

Հինգ նոյ » 119 20

Պրիւսի » 170

Կիրակի օրն Աղգային վարչու-

թեան կրօնական և քաղաքական Ժո-

ղովներն եկեղեցական Համագումար

Ժողովոյ հետ Պատրիարքարանի մէջ

խառն նիստ կազմելով զինուորու-

թեան խնդրոյն վրայ ընդ երկար խոր-

հեցան :

Ս. Պատրիարքն անձնական տկա-

րութեան պատճառաւ բացակայ ըլ-

լալով , Համագումար Ժողովոյ կողմա-

նէ 6 եկեղեցականներէ պատգամա-

ւորութիւն մը ն. Սրբապետութեան տու-

նըն երթալով խնդրեց որ բարեհաճի

Ժողովոյ նախագահութիւնն անձամբ

վարել և այն գումարման նպատակը

բացատրել :

Սոյն ստիպողական հրոյ էրին վը-

րայ ն. Սրբապետութիւնն ու զեկեղե-

թեամբ եկեղեցական պատգամաւոր-

ութեան Պատրիարքարանի եկա , և

նախագահական աթոռը բազմելով

Ժողովոյ գումարման նպատակը բա-

ցատրեց :

Սակայն Համագումար Ժողովը

ներկալ պարագայից մէջ զինուորա-

տուութիւնը տարաժամ համարելով

և չկրնալով խառն Ժողովոյ առաջար-

կութեանց համաձայնի իւր կարծի-

քը խմբագրելու համար յանձնաժո-

ղով մ'ընտրեց որ երէկ զալաթիւն է-

կեղեցիներ գումարուեցաւ և ըստ յանձնարարութեան Համագումար ժողովոյ արդիւնքը խառն ժողովոյ դիւանին պիտի ներկայէր :

Մեր ստացած ստղագր. տեղեկութեանց նայելով, խառն ժողովն Համագումար ժողովոյ այն որոշումն Ազգային ժողովոյ պիտի ներկայէ :

Հետեւաբար թերեւ այս ուրբաթ Ազգ. ժողովը գումարի :

Էֆէնտի.

Հրապրոյդ հինգշաբթի աւուր թերթին մէջ՝ 31 եկեղեցականաց հանրագրին ետաքծիկ մը ձևօք ձեզ զրկուած ըլլալուն առթիւ բրած գիտողութիւննիւ վարչութեան փաղ. ժողովոյ կողմէն նկատողութեան առնուելով, պէտք եղած քննութիւնն ըլլալէ ետեւ ինձ յանձնարարուեցաւ ծանուցանել ձեզ թէ՛ այդ հանրագրին հրատարակութիւնն որ և է պաշտօնական ատենին մը կողմէ որոշում առած չէ . այլ պարզապէս կրօն. ժողովոյ դիւանագրի Արժ. Եղնիկ վարդապետ՝ որ իբրեւ քարոզիչ ստորագրած է յիշեալ հանրագրին, իւր կողմէ զրկած է իբրեւ մի ի ստորագրողաց հանրագրոյն, որուն կամակից գանուած են եղբր նաեւ իւր ստորագրակից եկեղեցական հարք :

3 դեկտ. 1877 Գիւանապետ ի Պատրիարքարան Հայոց Թափառ Կ. Պոլիս

Դո՛ւ ճնք որ վարչութիւնը մեր գիտողութիւնը նկատողութեան առած է. բայց թո՛ղ ներքէ մեզ դիւանի տալ թէ իւր այս բացատրութիւնը մեր բրած գիտողութեան պատասխան ըլլալէ շատ հեռի է :

Մեք վարչութեան չէինք հարցուցած թէ դործուած ապօրինութեան հեղինակին ո՞վ էր. արդէն դիւանինք թէ այդ անարժան եկեղեցականն էր :

Խնդիրը դործուած զեղծման վրայ է, ուրիշքն, աղբէն ամսական ստացող պաշտօնեայններն այս կամ այն պաշտօնէին անձնական կրից, շահուց և մեքենայութեանց դործիք ըլլալուն վրայ է :

Հետեւաբար մեզի պէտք եղածն է գիտնալ թէ վարչութիւնն այդ զեղծման առաջին առնելու և հեղինակը պատժելու համար ի՞նչ միջոց ի դործ դրած է :

Ահա այս կարևոր կէտին վրայ վարչութիւնը բացարձակ լուծիւն կը պահէ, յորմէ կը հասկցուի թէ կամ վարչութիւնն անկարող է այս օրինակ զեղծումները պատժելու և արգիլելու, կամ կը թողու որ Պատրիարքարանի մէջ արդէն տեղի գտած զեղծումներն արմատանան :

Ուրիշ կարևոր կէտ մ'ալ կայ, զոր չենք ուղեր ան յիշատակ թողուր Ազգ. Եղնիկ անուն վարդապետն իւր պաշտօնը չարաչար դործածելով՝ երբ խմբագիր երեսփոխան մը խաբելու փորձ փորձել կը ժայրհի, արգեօք Պոլսոյ միտմիտ ժողովուրդներն և հեռաւոր գաւառաց աղքատիկները խաբելու համար այս և այսպիսիներն ինչէր չեն ընել : Ծատ դիւրին է երևակայել :

Վերջապէս կըտեսնուի թէ՛ ժամանակաւ իղմիրջան Մատթէոս վարդապետ խրիմեան սրբազանի պատրիարքութեան օրով ինչ դերը որ կը խաղար Պատրիարքարանի մէջ իւր բարեբարին դէմ, նոյնը կընէ ահա այսօր ալ Եղնիկ վարդապետ ներկայ Ս. Պատրիարքին դէմ, որ իւր պաշտպանն ու բարեբարն է :

Կը մնայ տեսնել թէ մեր այս գիտողութեանց վրայ վարչութիւնն ի՞նչ պիտի ընէ :

ՄՈՒԲԱՏԵԱՆ ՎԱՐՃԱՐԱՆ

(Ծառ. Դեմ 2060)

Պարզեւատուի մասին Մեծ. հեղինակին ըրած ակնարկութիւնը մնւթ է. խօսքը կարծենք Մուրատ Թովհանէս աղային վրայ է. բայց չհասկըցաւ իր թէ ինչ մեքենայութիւն ի դործ դրած է : Կը յուսանք որ Մեծ. Զուեգ. Էֆէնտի կը հաճի բացատրութիւն մը տալ հրապարակու աղբ. մասին, և կանցնինք տետրակին շաբաթակութեանը :

« Վ. Հայր Սարգիսը վերոյիշեալ վրձնոյն դէմ բողոքեց . դատաստանը ամսոյս 11 ին, այսինքն ուրբաթ օրը պիտի ըլլար :

« Ատենանք ըստ երեսփոխան ժամը երկուքուէսին սկսաւ : Գահերէցէն եւ 10 առաքականներէն զատ՝ քանի մ'ալ փաստաբաններ եւ աղքատիկն ու օտարազգի շատ անձինք ներկայ էին : Խօսքը առաջ Պ. Ռուս Վ. Հայր Սարգիսն փաստաբանը առաւ, և իր ճատարական ճառին մէջ, նախ՝ Մեծապատիւ Ստեփն Մուրատ աղային վարուց պատմութիւնը, մանրաւ մասնաբար պատմեց . երկրորդ՝ առաջին տետրակին վճիռը . երրորդ՝ տեղոյս Ազգ. եպիսկոպոսին 1850 յուլիս 6 ին առ դէ. րօպայծառը դրած նամակը ի պատասխանին այն նամակին, որուն մէջ Բարձրագոյն Կրան հպատակ ըլլալով գաղղիական իրաւարարութեան ստորագրեալ կարող չլլալին հաստատուած էր . չորրորդ՝ Օսմանեան տէրութեան գործակալին առ Վ. Հայր Սարգիս գրած գիւրը, թէ մինչեւ որ Պոլսէն պատասխանը գայ, ինքն է պատասխանատուն . հինգերորդ՝ գերապայծառն առ Վ. Հայր Սարգիս առաջուան գրած ակնածութեան քանի մը նամակները : Իսկ գերապայծառն փաստաբանը՝ Պ. Վիլմէն, որ անկէջ ետքը խօսքը առաւ, իրեն իբրեւ սիրող դրած, թէ Էդհանրական Արքայն թէ՛ իրաւաններուն և թէ՛ վանքին կառավարութեանը վրայ միմիայն բացարձակ տէրն է . իսկ Մուրատեան վարժարանին նկատմամբն ալ յատուկ կատարեալ իշխանութեան զիր առած է վանական ժողովքն : Թէ այնու գործութեանը ճորտայն է Վ. Հայր Սարգիսն որ վարժարանէն ելլէ, անկից ալ չէ ելեր, և իրեն այս ժխտելով վարժարանին մէջ մեծ դրդութիւն պատճառեց է, եւ : Այս խօսքերէն ետքը, վրայ աւելցուց թէ, թէ պէտք և ստուգիւ ամբաստանողը և ամբաստանեալը Բարձրագոյն Կրան հպատակ ըլլալովն չեն կրնար իրենց ատենաներէն դատուիլ, բայց որովհետեւ խաղութիւն կայ, և մեծ վրդովման վրտանգ, այս պատճառաւ գաղղիական դատաստանը հաստատուեց խաղաղութիւնը պահելու համար՝ կրնայ միջամուխ ըլլալ, դատաստան ընել, և պէտք է ալ որ Վ. Հայր Սարգիսը վարժարանէն հանէ, որ աղող մէջ խաղաղութիւնը հաստատուի : Փաստաբանը խօսքը ընցնելէն ետքը, դատաւորները քովէ քով եկան, և ստեղծարանէն աւելի՝ երկայն խորհրդ. գաղղիութիւն ըրին : Ծագած միջադատութեան և ըրած չարժանքներէն կերեւաւոր, որ մէջերէն կործեաց մեծ տարբերութիւն կար : Վերջապէս գահերէցը նստեցաւ, վճիռը կարդաց, որուն մէջ այս սկիզբը առնելով թէ հասարակաց խաղաղութիւնը վտանգի մէջ է, անկէջ կը հետեցնէր, թէ գաղղիական ատենանը մէջը մտնելը կը հարկաւորի, ուստի այսու սկզբամբ՝ Վ. Հայր Սարգիսն ելլելու վճիռը կը հաստատուէ : » (6)

Այս տեղ Մեծ. հեղինակը Հ. Թեոփորեանի վրայ եղած ամբաստանութեան կէտերը մի առ մի հերքելով՝ հետեւեալ ուշադրութեան արժանի խօսքը կը յաւելու :

« Արդ՝ եթէ ճշմարիտ է այն ամբաստանութիւնը (հաշուց զեղծման ամբաստանութիւնը) ինչու համար մի և նոյն տունը գերապայծառը Մուրատեան Զովհանէս աղային, անոր փաստաբանին, Նախարարին և ամեն վերնագոյն հարցաքննողաց հաստատած խաղաղութեան է, թէ հաշիւները շատ կանոնաւոր և շատ ուղիղ են . ուրեմն իրեն ա՛յնչափ ձեռք չի տար որ հաշիւներուն մէջ ծուռութիւն և վարժարանի դրամին մէջ գէշ մտաւարարութիւն ըլլալը իմացուի, որ չլլայ թէ անկէջ վարժարանին հաշիւները քննելու խօսքը նորէն հանեն, և տէրութեան հսկողութեան տակը ձգելու հարկաւորութիւնը նորէն անկէջ յառաջ բերեն : » (7)

« Վ. Հայր Սարգիս, վճիռը արուելէն »

(6) Երես 26, 52, 55, 54, 55 և 56 :
(7) Երես 58, 59 :

ետքը, կարեկցութեամբ լցուած ըլլոր Ազգայինները իր չորս կողմը առած տեսնելով, զողովով ձեռքբերին վաճակ և այս խօսքերս բաւ . « Պարոններ, ես այս հիշնարկութեանը համար Հնդկաստան 100 օր բռնու նստած եմ. հիմայ անկէջ գրաւ կը հանուի : Առաջինը սիրով կրեւէս ետքը՝ այս ալ քաջութեամբ յանձն կառնում, վասն զի երկուքն ալ Ազգին աղքատ և որր աղց պաշտպանութիւն ընելու համար էր . թէ պէտք և այս ալ ստղոյ է որ, այն տունը երկուստարդ և ուժով էի, իսկ հիմա ծեր և տկար եմ : Պարոններ, հանուելուս պատճառը այս է, վասն զի աղքատ և որր աղց դրամը գեղծութեամբ մատակարարուելուն դէմ և Ազգին մէջ խաղաղութիւն ընելուն համար՝ ամեն անգամ թէ՛ գերապայծառն և թէ՛ Միտանութեան բողոքներ ըրած և անոնցմով իրենց անտանելի եղած եմ : Այլ յուսամ որ մտաւոր այս բողոքներս Ազգին մէջ ալ հրատարակելով, Ազգն ալ կը տեսնայ և կը հաւատայ : Ես մինչեւ հիմա իմ պարտքս ըրի, և սիրտս հանդիստ է . թո՛ղ Ազգն ալ իրեն խաղաղեցը ճանչնայ, վնասէ, և իրեն վերադարձը ընէ » : (8)

Աւելի խորին ուշադրութեան արժանի են Հ. Թեոփորեանի Մուրատեան վարժարանէն արտաբարուելու պատճառներուն բացատրութիւնն ու ի պաշտպանութիւնն աղղւային իրաւանց առաջարկուած փոփոխութիւնը, զորս հարկ կը համարինք գրեթէ անկաշմ մէջ բերել : Հիշելով իրեն անաշխարհ փոփոխութիւնը իր բանաւրնակին նուրբ մտաց պատիւ կը բերեն :

« Ամենուն յայտնի է քանի մը տարի յառաջ՝ Բորթալիանոյի աշակերտաց և Միխիթարեանց կողմանէ հրատարակուած երկու գրքերուն պատճառաւ ծագած կռիւները և խաղութիւնները : Հաստեան գերապայծառ նախագահին գիտակցութեամբ՝ Բորթալիանոյի աշակերտներուն հրատարակած պարտաւորեցը՝ Միխիթարեանց դէմ իրենց ըրած ամբաստանութեանց միայն համառօտութիւն մըն էր . երեք կամ գուցէ հինգ հատորի չափ ամբաստանութիւններ՝ արդէն Հռոմայ դիւանատունը զիջուած էին : Իսկ Միխիթարեանց՝ այն պարտաւորեցին դէմ իրենց ի յաւիտեանս պարտաւորեցին եւ զոյ պատասխանը, որչափ որ ալ փնաւ կաններուն մէջ մասին հաւանութիւնը գտաւ ալ, ողջամիտ մաս մ'ալ կար, որ անոր հաւան չէր : Փարիզի Մուրատեան վարժարանին կառավարիչները, ասոնց մէջը աւելի քաջամիտ գանուելով համարձակեցան նոյնին դէմ բողոքել, և բողոքին Չմիւնիտի արդիւնաւոր Արքայն սին միջոցաւ հրատարակեցին : Ասիկա իրենց համոզումն էր, բայց անկից Բրթալիանոյի ատենադպրին, ուրիշքն Տոն Պարնապոյն ձեռք չէր տար : Բայց գանք պատմութեան շղթային : Վերոյիշեալ երկու գրքերովը ծագած խաղութեանց և զայնից վրէժնիւններուն համար ստիպուեցան երկու մեծապատիւ խոյրադիրներ, և նախաւոր գրքերին անութիւնը գարկած, Հռոմ երկրի հարցաքննուելու համար : Վիճարանութիւնները երկայն քըչեցին, բայց յայտնութիւնը երբեք երկրպայտան չէր կրնար ըլլալ : Հնար էր մի նիւնագրուիլ, թէ Բորթալիանոյի զըւրրօրին ատենադպրով՝ (որուն յանձնուած էր այդ դատը ինչպէս նաեւ հաւատոյ աւան դատերը) իր գաղղիին շերտակից աշակերտը յանցաւոր դռնէ, և մէկալ կողմանէ ալ, այս առթիւ ձեռքը ինկած և ի վաղուց բազմացուած կառավարեալ որսը զիւրաւ փակցնէ : Ուստի վճիռը յայտնի էր, և տրուեցաւ իսկ : Հաստեան գերապայծառը պարտաւորեցը յետս պիտի կոչէր՝ կոչեց, և ասով ամեն զըլտուցութիւններէ ինքը ապաւեցաւ . իսկ Հիւրմիւլ գերապայծառը իր վանականօքը հանդերձ հարկաւորուեցաւ նորէն հաւատոյ դատանութիւն մը տալու և տուաւ : Բայց անոր մէջը, Ազգին եկեղեցին ճշմարիտ եկեղեցիցէն դուրս ըլլալը յայտնապէս չէր դուրս, և ուստի ուրիշ դաւանական յայտարարութիւն մ'ալ առաջարկուեցաւ, խաղաղութեամբ, որ անիկայ գրեցէք և մի վախճալ դուրս չեմ հաներ : Այն ալ տրուեցաւ, և կը ստորագրուի, թէ պէտք և ամենք խիղճ ընելով, ոմանք լալով, և մէկը ի գուր ըստ պատնայիք և բողոքներ լսելով չի ստորագրել : Զայտարարութիւնը արուելէն երեք օր ետքը, օրինակի ամեն կողմ հրատարակուեցաւ : Այս դաւանական յայտարարութեան մէջ կը պարտաւորուի Միխիթարեանը քարոզութեան երթալու ատենին, նորէն ճշմարիտ քաղղիկ ըլլալուն վրայ երդուիլ ընել, ստուտեալաւ նութեան քննութիւնը Հռոմայ աշակերտաց առջիկ անցիկ, ինչեց կառավարութեանը Գահ. Եղնիկը Էդհանրական Արքայն Հռոմայ ելլալու արգելադրելով : »

« Այս տեղ Մեծ. հեղինակը Հ. Թեոփորեանի վրայ եղած ամբաստանութեան կէտերը մի առ մի հերքելով՝ հետեւեալ ուշադրութեան արժանի խօսքը կը յաւելու :

(8) Երես 41, 42, 43 :

« Եւ ինչ և իրաւանքներն չենք քննել, եւ եւ տան հատուածներ : Մուրատեան վարժարանին կառավարիչները տո՛ւն հաւատոյ դաւանութեանը դէմ բողոքել էին, այս երկրորդ դաւանական յայտարարութեանը դէմ աւելի խիստ բողոքներ ևս գրեցին վանքին, բայց ի գուր : Իսկ երրորդ վերոյիշեալ հատուածին վրայ յենով՝ ուղեց Ատենադպրը Մուրատեան վարժարանը Հռոմ փոխադրել, դարձեալ դէմ բողոքեցին, բայց այս անգամ, աղղւայնոց գործակցութիւնն ալ ի նպատակ գալով՝ յաջողեցան և փոխադրուիլ արգելեցին : Սակայն այս ամեն անգամ դէմ դէմ բողոքներ առանց պատիժի չափանալին : Առաջին հարուածը՝ Վ. Հայր Պարթէլ Ս. Պատրիարք վարդապետին վրայ ինկաւ, որ Մաշապոյսին մէջ հրատարակուած հատուածը ստորագրած էր : Ուստի հրաման կուգայ գերապայծառին, և գերապայծառն ալ Վ. Հայր Պարթէլին՝ որ այն հատուածը յետս կոչէ, Հռոմ ելլալ, և մեղայի գայ : Բայց Վ. Հայր Պարթէլ յանձն չառնուր իբրեւ մուրաւորութիւն և սխալ յետս կոչել այն դրուածքը որուն ինքը սրտանց համոզուածը դեռ ունէր : »

« Ասանց աղղին իրաւանց ընտարարութիւն մը աղղ դէպքերուն մէջը նկատուելու, վարժարանին այժմեան գործքերը բողոքովին մեր սահմանին դուրս կը համարուէր և մեզի համար կարեւորութիւնը կը կորսնցնէր : Բայց այս բռնաբարութիւնը նկատուեցաւ . և մանաւանդ, Միխիթարեան Հայր խաղաղութեան սղին, աղղին որը և աղքատ որսը իրենց բաժնէն զրկելու ունեցած դիտաւորութիւնը, անկաւ մատակարարութիւնը, համոզեցաւ աղղաւոր իրաւարան կտակին դէմ գործողութիւնները, իրենց նպատակը և առ այն հասնելու համար բանեցուցած ճիգերը, որ արդէն մտադիրներու շատոնց անտես և անձանօթ չէին, այսու առթիւ աւելի մեղաւորաբան եղան և մտածել տուին Ահա ասոր վրայ աղղը գողցալեւ կուգանք, և անոնց դէմ բողոք կրենք, որ ամենակարճ կերպով և պարզ խօսքերով հետեւեալ կէտերուն վրայ կամիտութիւն կը հաստատուի :

Միջոցեւ յաջորդ Թափառ

Ի Լ Ա Ն

Դաւանը տագիւղ տէկիրմանընտառ թաթըմը իւզըն մէվընուտ պուլունան սէքըիլ երեզ չուվալ չեվրէնթիմին ագ. ձէսի երեզըիւք գայիմէ երեզ զրուշա օլարաք նադատէն վէ փէշինէն վիւրլուլալ ախը զըլընմաք իւզըն պէհէր չուվալը օն պիր զուրուշա թափալի Էօհտէսինտէ օլուպ քեանունի է վէլը ռումինին սէքըինձի փէշնէշեպիս կիւնի քարարը գաթիսի վիւրիլէրէք ֆիւրուլթ օլունաճաղընտան, տահադիւյա տէ ֆիլաթլէ իշթիրապընա թալիպ օլանլարըն և էվմը մէզըիւրտէ Տարը Ծուրայի ասքըրիլէ կէմէլէրի :

1 Գեանուելի Եվլէլ 1877 2 Պապը Սէրասքերի

Ասաքիրի Ծահանէ Էլպիսն անպալը իլէ թապուրտա թալիսի գ օնթիւրա թօսան իթիպարէն ալթը մահ խիթա մընա գատար հէր նէ մըգտար գըր. վրնթը հասըլ օլուրտա ագ ձէսի երեզըիւք գայիմէ երեզ զրուշա նադատէն վէ փէշինէն վիւրիլուլալ ախը զըլընմաք շար թըլըլա ֆիլուլթ օլունաճաղ իւզըն միւզայիտէէ գօնուլտուլու մուգատա տէմէն իլան օլունան գըլվրնթընըն պահասը միւթէսիւտէն Նիլաթլէ խաղիւնէսինտէ օլան մաթլուպաթընտան երինէ երեզըիւք գայիմէ երեզ զրուշա օլարաք մահասը օլունմադը իւզըն պէհէր գըլէյի երեզ սէքնէն եհտի վարաւա թալիսի Էօհտէսինտէ օլուպ քեանունի Եվլէլ ռումինին սէքըինձի փէշնէշեպիս կիւնիւ գա. րարը գաթիսի վիւրիլէնէկինտէն, իշթիրա իթմէլէ թալիպ օլանլարըն և էվմի մի մէզըիւրտէ Տարի Ծուրայի ասքըրիլէ կէմէլէրի :

1 Գեանուելի Եվլէլ 1877 2 Պապը Սէրասքերի

* Այս տողերը մեք ստորագծեցինք : Եթէ ուրիշ փաստեր չունենայինք, այս փաստը միայն բաւական էր Մուրատեան վարժարանը Միխիթարեան փարանաւթեան ձեռքէն առնելու համար :

